

Ամեն հայու լանջքին տակ
Իր մէկ հին պապն արթնացուր.
Եւ նուիրական, յաւերժական զանգուածով
Չանոնք խառնէ եւ խըմորէ եւ ծուլէ
Եւ ըստինքովդ ապրեցուր:
Այնպէ՛ս որ՝ քու մայրենի
Ճաճանջաւուխտ թել թռիչներուդ տակ ամփոփ
Տաքնա՛յ մեր հողն, եւ բլուրներուն վրայ խայտան
Գարուններն հին, Նաւասարդները՝ լեցուն
Մարտիկներու վահաններուն կոփիւնով.
Մեր արծիւներն եւ ուրուրները՝ թողած
Ճախճախուտները նըւաստ՝
Կայծակներու թառերուն վրայ կըռընչեն.
Էգ առիւծներն ու Էգ վագրերը բոլոր՝
Մայրագորով լիզումով՝
Ըլլան կայտառ հայկականերու կաթընտու.
Մեր ամպրոպները (լեցուն
Ըստուերներովն երգիչներուն գողթական)
Սըրտին մէջ հայ քերթողին
Փոխուին երգի ու չափուին
Կայծակներու շէշտերով.
Բանուորն հեստի՛, հեստի՛ գեղջուկն ու՝ այգուն՝
Երբ իր քայլերն ուղղուին դաշտերն աւերուած,
Արշալոյսէն արիւնի հոտը առնէ
Եւ արիւնի՛ ծարաւի.
Շունչիդ զեփիւռն ու ճառագայթն աչքերուդ,
Նըման գարնան մեր տան շէմերը պըճնող,
Թող ճամբորդեն հիւղէ հիւղ,
Բնակարանէ բնակարան.
Կանգնի՛ն այրերն ու մայրեր,
Ծերը կանգնի՛, կանգնի՛ տղան.